



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 229/15 « 09.12 » 2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱԿԱԼԱՎՈՐԻ ԵՎ ՍԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման պահանջը և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2019-2020 ուստարում ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով նախատեսված մի շարք դասընթացներում փորձնական եղանակով ներմուծել և իրականացնել հետազոտական բաղադրիչ:

2. Սահմանել, որ.

2.1 հետազոտական բաղադրիչը ներառվում է միայն մասնագիտական դասընթացներում: Հետազոտական բաղադրիչ ունեցող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է ինստիտուտը: Բակալավրի կրթական ծրագրում այդ դասընթացների քանակը երկուսն է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ մեկից երկուսը,

2.2 դասընթացի շրջանակում իրականացված հետազոտական աշխատանքի գնահատականը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից մեկի գնահատական,

2.3 հետազոտական աշխատանքը կատարվում է ուսանողի կամ ուսանողների խմբի (առավելագույնը 4 ուսանող) կողմից՝ դասընթացը վարող դասախոսի ընդհանուր ղեկավարությամբ,

2.4 հետազոտական աշխատանքը՝ ներկայացվում է դասախոսին տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով, ունի վերնագիր և ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դրված հիմնախնդրի և հետազոտության նպատակի հստակ ներկայացում,

բ) դիտարկվող հարցերի և թեմաների վերաբերյալ գրականության հակիրճ վերլուծություն,

գ) հետազոտական մեթոդի կամ մեթոդական համակազմի նկարագրություն,

դ) տվյալների հավաքագրում՝ ըստ դրված խնդիրների,

ե) ստացված արդյունքների (տվյալների) ներկայացում և վերլուծություն,

զ) եզրակացության ներկայացում,

է) գրականության ցանկ:

2.5 դասընթացի հետազոտական բաղադրիչի գնահատումն իրականացվում է հետևյալ չափանիշներով.

ա) հետազոտական թեմայի արդիականություն և կատարման ինքնուրույնություն՝ առավելագույնը 0,5 միավոր,

բ) ստացված արդյունքների հիմնավորվածություն և հավաստիություն՝ առավելագույնը 1 միավոր,

գ) ստացված արդյունքների քանակական վերլուծություն՝ առավելագույնը 1 միավոր,

դ) աշխատանքի բանավոր ներկայացում՝ առավելագույնը 2 միավոր,

ե) համապատասխան եզրակացության առկայություն՝ առավելագույնը 0,5 միավոր,

2.6 հետազոտական աշխատանքի թեմաները տրվում կամ հաստատվում են դասախոսի կողմից մինչ կիսամյակի 3-րդ շաբաթվա ավարտը: Խմբային հետազոտական աշխատանք կատարելու դեպքում, խմբերի կազմը հաստատվում է դասախոսի կողմից մինչ կիսամյակի 4-րդ շաբաթվա ավարտը:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը, Ֆարմացիայի ինստիտուտի աշխատողներին և ուսանողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ